ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2019 թվականի N 52 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Հաստատել 27-ը սեպտեմբերի 2019թ. թիվ 8 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի 2019 թվականի բյուջեում վերաբաշխումներ կատարելու մասին,

3.Եղեգիս համայնքի Հորբատեղ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,1հա այլ հողեր հողատեսքը աճուրդային կարգով օտարելու մասին,

4.Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,52013 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը աճուրդային կարգով օտարելու մասին,

5.Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը աճուրդային կարգով օտարելու մասին,

6.Եղեգիս համայնքի ավագանու 20/12/2018թ. թիվ 73Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին,

7.Եղեգիս համայնքի ավագանու 28/02/2018թ. թիվ 14Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,

8.Եղեգիս համայնքի գույքագրման ցուցակներում լրացումներ կատարելու մասին,

9.Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի առանձին համայնքային ծառայողների հավելավճար սահմանելու մասին,

10.Եղեգիս համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին,

11.Եղեգիս համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման եվ իրականացման կանոնները սահմանելու մասին,

12.Համայնքի ավագանու կողմից իր անդամի /անդամների/ և /կամ/ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով Եղեգիս համայնքի բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարբերականություն սահմանելու մասին,

13.Եղեգիս համայնքի վարչական տարածքում S-9-21-Հորբատեղ, կմ0+000 – կմ6+500 ճանապարհահատվածի շինարարական աշխատանքներից գոյացած երկրորդային ասֆալտը համայնքի բնակավայրերի ճանապարհների բարեկարգման եվ հարթեցման համար օգտագործելու համաձայնություն տալու մասին,

14.Մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների ժամանակ գոյացած վառելափայտը /շենքի հին հատակը/ անհատույց սոցիալապես անապահով ընտանիքների տրամադրելու մասին:

15. Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Միհիթար բացակա

Համայնքի ղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 53 Ն

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն համայնքի բյուջեի վարչական մասի՝

1. բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածից (հոդված 4657) - 8257.5 հազար դրամ,

2. բաժին 4 խումբ 2 դաս 4 ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ոլորտի այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածից (հոդված 4657) 4800.0 հազար դրամ,

<u>պակասեցնել</u>՝ուղղելով համայնքի բյուջեի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ոլորտի պահուստային միջոցներ (4891 հոդվածին),այնուհետև նույն ոլորտի 4891 հոդվածից պակասեցնել 13057.5 հազար դրամ,

<u>մուտքագրելով</u>՝ համայնքի բյուջեի եկամուտների (հատված 1) վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր տողին՝ տող (1392) և նպատակաուղղել՝

բաժին 4 խումբ 2 դաս 4 ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ոլորտի շենքերի և շինությունների կառուցում հոդվածին (հոդված 5112) 13057.5 հազար դրամ, Աղնջաձոր, Շատին, Քարագլուխ բնակավայրերի ոռոգման ցանցի վերանորոգման ֆինանսավորման համար:

3. բաժին 4 խումբ 2 դաս 4- ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ոլորտի հատուկ նպատակային նյութեր հոդվածից (հոդված 4269) 1000.0 հազար դրամ,

4. բաժին 6 խումբ 3դաս 1- ջրամատակարարում ոլորտի շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածից (հոդված 4251) 1000.0 հազար դրամ,

պակասեցնել և ավելացնել

բաժին 8 խումբ 1 դաս 1 -հանգստի և սպորտի ծառայություններ ոլորտի այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածին (հոդված 4657) 2000.0 հազար դրամ Արտաբույնք բնակավայրի ֆուտբոլի դաշտի կառուցման ֆինանսավորման համար Ֆոնդային բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները Ավելացնել համայնքի բյուջեի եկամտային մասի գույքի օտարումից մուտքեր հոդվածին (հոդված 8411) 3330.0 հազար դրամ, և այլ մուտքեր ակտիվների իրացումից հոդվածին (հոդված 8131)-821.0 հազար դրամ **համապատասխանաբար ուղղել՝**

բաժին 4 խումբ 2 դաս 4 ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ոլորտի շենքերի և շինությունների կառուցում. հոդվածին (հոդված 5112) -4151.0 հազար դրամ Աղնջաձոր, Շատին, Քարագլուխ բնակավայրերի ոռոգման ցանցերի վերանորոգման ֆինանսավորման համար:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասի բաժին 9 խումբ 1 դաս 1 - նախադպրոցական ուսուցում ոլորտի շենքերի և շինությունների կառուցում հոդվածից (հոդված 5112) պակասեցնել 2000.0 հազար դրամ և ավելացնել՝

բաժին 4 խումբ 2 դաս 4 -ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ոլորտի շենքերի և շինությունների կառուցում հոդվածին (հոդված 5112)-2000.0 հազար դրամ Աղնջաձոր, Շատին, Քարագլուխ բնակավայրերի ոռոգման ցանցի վերանորոգման ֆինանսավորման համար:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Պերճուհի բացակա

Համայնքի ղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 54Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐԲԱՏԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,1 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության /կադաստրային ծածկագիր՝ 10-030-0019-0031, մակերեսի չափը՝ 0,1 հա/ հողը աճուրդային կարգով օտարելու վերաբերյալ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

3.Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա է

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար բացակա է

Համայնքի ղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 55Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,52013 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողը աճուրդային կարգով օտարելու վերաբերյալ՝

- գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսք /կադաստրային ծածկագիր՝ 10-044-0228-0009, տարածքը՝ 0,52013 հա/,

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով,

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

Համայնքիղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 56Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում՝

1.Տալ համաձայնություն Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողերը աճուրդային կարգով օտարելու վերաբերյալ՝

- գյուղատնտեսական նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝ 10-044-0227 -0038 , մակերեսը՝ 0,05696 հա,
- գյուղատնտեսական նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝ 10-044-0227 -0039 , մակերեսը՝ 0,04462 հա,
- գյուղատնտեսական նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝ 10-044-0227 -0041 , մակերեսը՝ 0,32795 հա,
- գյուղատնտեսական նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝ 10-044-0227 -0040, մակերեսը՝ 0,01958 հա,
- գյուղատնտեսական նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝10-044-0227-0021, մակերեսը՝ 0,04385հա,
- գյուղատնտեսական նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության, ծածկագիր՝10-044-0227 -0037, մակերեսը՝ 0,06345 հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով,

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Չեռնպահ՝ 1

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Միհրան բացակա

Համայնքի ղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 57Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20/12/2018Թ. ԹԻՎ 73Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասով

ավագանին որոշում է՝

*Անվավեր ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու «*Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին*» 20-ը դեկտեմբերի 2018 թվականի թիվ 73Ա որոշումը:*

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Ախիթար

Համայնքի ղեկավար՝ ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 58Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28/02/2018Թ. ԹԻՎ 14Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով

ավագանին որոշում է՝

ՈՒԺը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու <<Եղեգիս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմը հաստատելու մասին>> 28-ը փետրվարի 2018 թվականի թիվ 14Ա որոշումը:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արաեանի

Վարդանյան Մխիթար բացակա

Համայնքի ղեկավար՝ ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 59Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՅՈՒՅԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի 28/08/2019թ. N 01/08.1/4268-2019 գրությունը

ավագանին որոշում է՝

1.Եղեգիսի համայնքապետարանի միջոցներով 2019 թվականին ձեռք բերված ստորև ներկայացված գույքը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

1.1.սվիչ TENDA S 108, 1 հատ, 6500 դրամ /Թառաթումբում/,
1.2.կոշտ սկավառակ 2TB,1 հատ, 40 000 դրամ /Քարագլուխ/,
1.3. բազմաֆունկցիոնալ տպիչ սարք HP M28w, 1 հատ, 110 000 դրամ /Շատինում/,
1.4.բազմաֆունկցիոնալ տպիչ սարք CANON MF 3010, 1 հատ, 140 000 դրամ/Շատինում/,
1.5.համակարգչի իրան, 1 հատ, 15 000 դրամ /Շատինում/,
1.6.մկնիկ GENIUS NX7000, 1 հատ, 7000 դրամ /Շատինում/,
1.7.սնուցող սարք MERCURY 850W, 2 հատ, 66 000 դրամ /Շատինում/,
1.8.օդորակիչ DIAMOR DM 1622, 3 հատ, 21 000 դրամ /Շատինում/,
1.9.փոշեկուլ GORENJE VC 1411 B, 1 հատ, 25 000 դրամ/Շատինում/,
1.10. Տպիչ/printer: HP102A Laser, 1 հատ, 48000 դրամ/նվեր, Շատինում/,
1.11.Դյուրակիր համակարգիչ /Notebook copmuter: Asus VivoBook X541UA 15.6" (1366x768)/IntelCore i3-6006U(3MBCache, 2GHz) / 4GB RAM/ 500GBHDD/ InteHD Graphics520/DVD/RW/Bluetooth/webCam/WiFi/ 108kg./Silver/DOS/, 185 000 դրամ, /նվեր, Շատինում/:

2. Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /հասցեն՝ Եղեգիս համայնք, Հորս բնակավայր, փողոց 2, շենք 4/ տեղադրված 1 ԼԴ-800 շչակը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում:

3.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում, համայնքապետարանի շենքում /հասցեն՝ Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, փողոց 1, շենք 1/ տեղադրված 1 Ս-40 շչակը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բաց թողած

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բաց թողած

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար բաց թողած

Համայնքի ղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 60Ա

ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի բ/ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար ստորև ներկայացված համայնքային ծառայողներիպաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար՝ յուրաքանչյուրին 2 000 /երկու հազար/ դրամ.

1/Գրիգորյան Լուսինե,
2/Մարտիրոսյան Վարդան,
3/Պողոսյան Հրաչյա,
4/Մարտիրոսյան Անդրեաս,
5/Գրիգորյան Արշավի,
6/Սաֆարյան Վանուհի,
7/Մելքոնյան Նազիկ,
8/Մարգարյան Ռազմիկ,
9/Սարգսյան Մարտին,
11/ Քոչարյան Սաթենիկ,
12/Օհանյան Մուրադ,
13/Ոսկանյան Ռուբեն,
14/ Խաչատրյան Ալվարդ:

2.Համայնքային ծառայության պաշտոնում աշխատակազմի համայնքային ծառայողների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար հետևյալ սկզբունքով՝

Աշխատակազմում համայնքային ծառայողի աշխատանքային ստաժը	մինչև 5 տարի	5-7 տարի	7-10 տարի	10 տարուց ավելի
Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի չափը %-ով	0	10	15	20

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի մեկից:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար բացակա

Համայնքի ղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 61Ն

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի պահանջով և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝

ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի 1-ի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

Համայնքի ղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգիս համայնքի
ավագանու
2019 թվականի սեպտեմբերի 27-ի
թիվ 61 -Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ (այսուհետ՝ Գովազդ) տեղադրելու կարգը (այսուհետ՝ կարգ): Սույն կարգն ընդունվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

2. Արտաքին գովազդը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում՝ տարբեր տեխնիկական միջոցների օգնությամբ (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլնի) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքի կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունն արտաքին գովազդ չի համարվում:

3. Սույն կարգը տարածվում է բոլոր այն իրավաբանական և ֆիզիկական անձանց վրա, որոնց նախաձեռնությամբ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:

4. Եղեգիս համայնքի սեփականություն համարվող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով, գովազդ տեղադրելու պայմաններին համապատասխան, Եղեգիս համայնքի ղեկավարին դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին) օգտագործման իրավունքով տրամադրվում է հողամաս՝ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարաձգելու պայմանով:

5. Այն դեպքում, երբ գովազդի միջոցը տեղադրվում է համայնքային սեփականություն չհանդիսացող տարածքում (կամ դրանց օգտագործմամբ), ապա գովազդի միջոցի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվության մասին որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ տվյալ տարածքի սեփականատիրոջ կամ տարածքի օգտագործողի համաձայնության առկայության դեպքում: Ընդ որում, գովազդատուի և տարածքի սեփականատիրոջ միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով:

6. Գովազդի միջոց տեղադրելու թույլտվության մասին որոշման նախագծին կցվում է գովազդատուի ու տարածքի սեփականատիրոջ միջև կնքված պայմանագրի պատճենը:

7. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1422-Ն որոշման հավելվածով հաստատված պահանջներին:

2. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8. Եղեգիս համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման թույլտվության մասին որոշումը (այսուհետ՝ թույլտվություն) տրվում է համայնքի ղեկավարի կողմից:

9. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) դիմում-հայտ է ներկայացնում Եղեգիս համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, ազգանունը, հաշվառման վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության համարն ու ամսաթիվը:

10. Եղեգիս համայնքի ղեկավարը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) դիմում-հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը գովազդի տեղադրման պայմաններին (եթե այն թերի է, ետ է վերադարձվում՝ թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղաբաշխման (տեղադրման) ձևը գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը և կցվում է գովազդի էսքիզը: Թույլտվության որոշման նախագծերը նախապատրաստում է Եղեգիս համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետը՝ նախագծին կցելով համապատասխան եզրակացությունը:

11.Կարգի 4-րդ կետի համապատասխան հատկացված տարածքի նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Եղեգիս համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում

մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

12.Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի) դիմում-հայտը 15 օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում գովազդի տեղադրման պայմաններին.

2) խախտվում են «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են այլ անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

13.Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու դեպքում՝ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

14.Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրում կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Եղեգիս համայնքի ղեկավարին՝ կից ներկայացնելով համապատասխան պատվերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Եղեգիս համայնքի ղեկավարի հետ:

15.Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, գովազդի տեղադրման պայմաններին և այլ իրավական կետերի պահանջներին:

16. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Եղեգիս համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

17. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

18.Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամկետ դադարելու լուծելու դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

19.Կարգով նախատեսված պարտավորությունները գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Եղեգիս համայնքի ղեկավարի որոշման համաձայն՝ իրականացվում է գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժում՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

3. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Եղեգիս համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

21. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Եղեգիս համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

22. Գովազդի տեղադրման համար տեղական տուրքի չափը սահմանվում է Եղեգիս համայնքի ավագանու կողմից:

23. Վճարված գումարներն ուղղվում են Եղեգիս համայնքի բյուջե:

24. Եղեգիս համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման տեղադրման գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացվում է Եղեգիս համայնքի ղեկավարը, իսկ գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ Վայոց ձորի մարզպետը:

25.Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Հավելված N 2
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգիս համայնքի
ավագանու
2019 թվականի սեպտեմբերի 27 -ի
թիվ 61 Ն որոշման

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները (այսուհետ՝ պայմաններ) մշակվել են «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին» (այսուհետ՝ կարգ) համապատասխան:

2. Եղեգիս համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի միջոցների (այսուհետ՝ գովազդ) տեղադրումը թույլատրվում է կարգի և պայմանների պահանջներին համապատասխան:

2. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3.Արտաքին գովազդի միջոց են համարվում Եղեգիս համայնքի տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից: Դրանց թվում են վահանակային կայանքները, վահանակները, տանիքային կայանքները, մեծանկարները՝ պանոն, էկրանները, բարձրակիները, ցուցատախտակները, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարները՝ մարկիզ, գրաժապավենները և այլն:

3.ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.Գովազդի տեղադրմանը ներկայացվող պահանջները՝

1) գովազդի միջոցները չպետք է

ա) խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը, խանգարեն փողոցների ու մայթերի մեքենայացված մաքրմանը.

բ) սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա.

գ) առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում լույսով, այդ թվում նաև անդրադարձող.

դ) հանդիսանան հետիոտնի շարժմանը արգելք.

ե) լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա.

2) Պայմաններին համապատասխան ցանկացած տիպի գովազդի միջոցների տեղաբաշխումը, տեղադրումը պետք է հիմնավորել համապատասխան նախագծային և տեսողական ընկալման դիտակետից:

3) Գովազդ տեղադրել չի թույլատրվում՝

ա) բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր.

բ) թանգարաններում, պատմական և ճարտարապետականհուշարձանների վրա, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում.

գ) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա և դրանց տարածքներում պետական հաշվառման վերցրած պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցների, դրանց համակառույցների և համալիրների, իրենց գրված կամ պպատմականորեն իրենց հետ կապված տարածքների վրա, ինչպես նաև պատմամշակութային արգելանոցներում:

դ) ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

4) Եղեգիս համայնքի հրապարակներում, ինչպես նաև դրանց համար մուտքեր և ելքեր հանդիսացող տարածքների առանձին տեղերում կարող է տեղադրվել գովազդ, եթե այն չի խոչընդոտում ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը և հրապարակների կառուցապատման տեսողական ընկալմանը:

4.ԳՈՎԱԶԴԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5. Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից:

ա) Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝

-մեծ չափերի -3մx4մ, 3մx6մ և այլ չափերի

-միջին չափերի -1.8մx1.2մ, 2մx3մ

-փոքր չափերի -0.6մx0.9մ և ավելի փոքր չափերի.

բ) վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

-երկկողմանի կատարում

-միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է.

գ) Եղեգիս համայնքի բնակավայրերի կենտրոնական հատվածների սահմաններում թույլ է տրվում 0.6մx0.9մ 1.8մx1.2մ, ինչպես նաև 3մx4մ մակերեսով տեղեկատու դաշտով վահանակների տեղադրումը.

դ) Եղեգիս համայնքի բնակավայրերի կենտրոնական հատվածներում տեղադրվող տեղեկատու դաշտով գովազդային վահանակի կրող հիմնասյան դիրքը պետք է լինի միայն ուղղահայաց.

ե) Եղեգիս համայնքի տարածքում 3մx6մ և այլ չափերի տեղեկատու դաշտով գովազդային վահանակների տեղադրումը թույլատրվում է համապատասխան նախագծային հիմնավորման առկայության դեպքում.

զ) Եղեգիս համայնքի բնակավայրերի կենտրոնական հատվածներից դուրս կարող են լինել 1.8մx 1.2մ, 3մx4մ, 3մx6մ տեղեկատու դաշտով և այլ չափերի վահանակներ.

է) մայրուղիներում և խճուղիում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն

-15քմ – 18քմ և այլ չափերի 150մ-200մ

-10քմ – 15 քմ՝ 100մ – 150մ

-6քմ – 10քմ՝ 50մ – 75մ

-4քմ – 6քմ՝ 30մ – 50մ

-2քմ – 4քմ՝ 15մ – 25մ

-Մինչև 2քմ՝ 10մ – 15մ

ը) նեղ փողոցներում և նրբանցքներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

-10քմ – 12քմ՝ 50մ – 75մ

-6քմ – 10քմ՝ 30մ – 50մ

-4քմ – 6քմ՝ 20մ – 30մ

-2քմ – 4քմ՝ 10մ – 20մ

-մինչև 2քմ՝ 10մ

թ) մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկայության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ, որոնց տեղադրումը համապատասխանում է մայրուղիների, փողոցների և համայնքային գոտիների արտաքին ձևավորմանը ներկայացվող պահանջներին:

6.Շենքերի, շինությունների, ինչպես նաև համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղաբաշխվող (տեղադրվող) արտաքին գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակները.

ա) տանիքային կայանքները ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

- տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից:

- տանիքային կայանքները պետք է ունենան հակահրդեհային և հոսանքի վթարային անջատման համակարգ:

-ամրակցման տարրերը, ինչպես նաև կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով:

-տանիքային կայանքի տեղադրման հայտերն ընդունվում են պատվիրատուի կողմից մասնագիտական փորձաքննություն անցած կոնստրուկցիաների և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծի առկայության դեպքում:

բ) պատի մեծանկարներ (պաննո) են կոչվում արտաքին գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

- պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտածածկում է պատը, պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից.

- պատի մեծանկարներն կատարվում են անհատական նախագծի հիման վրա.

- պատի մեծանկարները պարտադիր պետք է ունենան համապատասխան փորձաքննություն անցած կոնստրուկցիաների նախագիծ.

- պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

գ) բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուններին կամ շենքերի վրա: Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել համայնքային լուսավորման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա: Բարձակները պետք է լինեն երկկողմանի տեսքով և ունենան ներքին լուսավորում:

Հիմքերի վրա (ուղղահայաց) տեղադրվող բարձակների տիպային չափերն են՝ 1.8մ x 1.2մ (մայրուղիների, պողոտաների, հրապարակների համար), 0.6մx 0.9մ, 1.0մx0.7մ (նեղ փողոցների և նրբանցքների համար) և ավելի փոքր:
Շահագործման անվտանգությունից նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3 մետր բարձրության վրա:
Հիմքերի վրա տեղադրված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասին դուրս՝ մայթի թողմը:
Արգելվում է մեկից ավել բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:
Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է երկու կողմերիընդհանուր մակերեսով:

7.Կրկնաձիգ գրաժապավենը (տրանսպարանտ) արտաքին գովազդի տեղեկատվության միջոց է: Այն բաղկացած է հիմքից, ամրացման սարքավորումից և տեղեկատու պատկերից:

ա) գրաժապավենների հեռավորությունն իրարից պետք է լինի 50մ-ից ոչ պակաս:

բ) գրաժապավենների բարձրությունը պետք է լինի երթևեկության գծի համեմատ 5մ-ից ոչ պակաս:

գ) տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում երկու կողմերի մակերեսով

8. Էկրանավոր սարքավորումներն արտաքին գովազդի և տեղեկատվության միջոց են:

ա) դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր:

բ) հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

9. Արտաքին գովազդի վահանակների միջև եղած հեռավորությունն ըստ տրանսպորտային միջոցների թույլատրվող արագության պետք է կազմի՝

ա) 60կմ/ժ թույլատրվող արագությամբ փողոցների համար մեկ ուղղությամբ երկու վահանակների միջև հեռավորությունը՝

-18քմ – 150մ

-15քմ – 100մ

-6քմ – 50մ

-2քմ – 25մ

բ) 60կմ/ժամ թույլատրվող արագությունից պակաս փողոցների համար մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը՝

-18քմ – 80-100մ

-6քմ – 45-50մ

-2քմ – 20-30մ

10. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ-ից ոչ պակաս բարձրության վրա:

11.Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան՝ մեկ ամսվա ընթացքում վերականգնելով սիզամարգի ծածկույթը:

12. Պայմաններում չնշված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումը թույլատրվում է Եղեգիս համայնքի ղեկավարի որոշմամբ:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 62 Ն

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով՝

ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Ջոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Սիմոնյան

Վարդանյան Մելիքսետ

Համայնքի ղեկավար՝ ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգիս համայնքի ավագանու
2019 թվականի սեպտեմբերի 27-ի
թիվ 62Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրականացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք, համայնքի ղեկավարի կողմից հաստատված և անհատ ձեռնարկատերերին և/կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում: Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

8. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

9. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:

11. Առանձին շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:

12. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:

13. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

14. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

15. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պաշտոնի նշմամբ:

16. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:

17. Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

18. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

19. Աշխատողներից բարմենը, խոհարարը, հրուշակագործը, մատուցողը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

20. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

21. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

22. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

23. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգիս համայնքի ավագանու
2019 թվականի սեպտեմբերի 27 -ի
թիվ 62Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրականացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք, համայնքի ղեկավարի կողմից հաստատված և անհատ ձեռնարկատերերին և/կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում: Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

8. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

9. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:

11. Առանձին շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:

12. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:

13. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

14. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

15. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պաշտոնի նշմամբ:

16. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:

17. Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

18. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

19. Աշխատողներից բարմենը, խոհարարը, հրուշակագործը, մատուցողը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

20. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

21. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

22. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

23. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 63 Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԱՆԴԱՄԻ/ԱՆԴԱՄՆԵՐԻ/ ԵՎ/ԿԱՄ/ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

Եղեգիս համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնելու նպատակով /ավագանու անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով/ սահմանել պարբերականություն՝ տարին մեկ անգամ:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արաեմակ

Վարդանյան Միհրան

Համայնքի ղեկավար՝ ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 64Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ Տ-9-21-ՀՈՐԲԱՏԵՂ, ԿՄ0+000 – ԿՄ6+500 ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱՍՖԱԼՏԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀԱՐԹԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով

ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի վարչական տարածքում Տ-9-21-Հորբատեղ, կմ0+000 – կմ6+500 ճանապարհահատվածի շինարարական աշխատանքներից գոյացած երկրորդային ասֆալտը օգտագործելու համայնքի բնակավայրերի ճանապարհների բարեկարգման եվ հարթեցման համար:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսետյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մեկիդան

Համայնքի ղեկավար ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 65Ա

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՅԱՑԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ՇԻՆԱՆՅՈՒԹԸ /ՇԵՆՔԻ ՀԻՆ ՀԱՏԱԿԸ/ ՈՐՊԵՍ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով

ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների ժամանակ գոյացած օգտագործման համար ոչ պիտանի շինանյութը /շենքի հին հատակը/ որպես վառելափայտ անհատույց տրամադրել սոցիալապես անապահով ընտանիքների:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Սիրմեներակ

Վարդանյան Միհրան բացակա

Համայնքի ղեկավար՝ ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը սեպտեմբերի 2019 թվականի N 66 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 14/12/2017 թվականի թիվ 29-Ն որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 31/08/2018թ. թիվ 57Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը

ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու ֆինանսական օգնություն:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր
Գևորգյան Արման
Հարությունյան Աշոտ
Հովհաննիսյան Ռուբիկ
Մարկոսյան Ռազմիկ
Մարտիրոսյան Զոյա
Մարտիրոսյան Նորայր
Մելիքսեթյան Վարդան
Մելքոնյան Արմենակ
Վարդանյան Միհրան

Համայնքի ղեկավար՝ ..... ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 1
Եղեգիս համայնքի ավագանու
27-ը սեպտեմբերի 2019թ, թիվ 66 Ա որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝

1. Թամամ Վարդգեսի Բունիաթյան, բն. Թառաթումբ, սոցիալապես անապահով ընտանիք, 15 000 ՀՀ դրամ,
2. Սիրանուշ Մաթևոսի Մկրտչյան, բն. Շատին, սոցիալապես անապահով ընտանիք, 20 000 ՀՀ դրամ,
3. Էմիլյա Սանասարի Հայրապետյան, բն. Շատին, սոցիալապես անապահով ընտանիք, 15 000 ՀՀ դրամ,
4. Վարդան Սողոմոնի Մնացականյան, բն. Շատին, սոցիալապես անապահով ընտանիք, 15 000 ՀՀ դրամ,
5. Ալինա Սիսակի Սարգսյան, բն. Արտաբույնք, սոցիալապես անապահով ընտանիք, 20 000 ՀՀ դրամ,
6. Կամո Գառնիկի Ներսիսյան, բն. Հորբատեղ, սոցիալապես անապահով ընտանիք, 20 000 ՀՀ դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 105 000 /մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

Հավելված 2
Եղեգիս համայնքի ավագանու
27-ը սեպտեմբերի 2019թ., թիվ 66Ա որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝

1. Եփրեմ Զոհրաբի Խաչատրյան, բն. Թառաթումբ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
2. Ոսկեհատ Ռոբերտի Ենոքյան, բն. Քարագլուխ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
3. Նարեկ Գեղամի Բաբախանյան, բն. Քարագլուխ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
4. Անահիտ Գրիգորի Պետրոսյան, բն. Արտաբույնք, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
5. Անահիտ Մասիսի Պողոսյան, բն. Հորբատեղ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
6. Աշոտ Արշամի Խանգալդյան, բն. Հորբատեղ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
7. Արայիկ Ալեքսանդրի Սարգսյան, բն. Հորբատեղ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,
8. Էմին Վիգենի Վարդանյան, բն. Վարդահովիտ, նորածին երեխայի խնամքի համար՝ 30 000 ՀՀ դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 240 000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան